




ՀԱՆՐԱԳԻՏԱԿ

ՀԱՆԴԵՍ

ՏԱՍՆՕՐԵԱՅ

Գիտական, Գրագիտական, Առևտրագիտական
և Մանկավարժական



1902 ՍԵՊՏԵՄԲԵՐ 20 — ԹԻԻ 31

ՏՊԱԳՐ. ՆՇԱՆ Կ. ՊԵՐՊԵՐԵԱՆ

Տպարանս փոխադրուած է Պապը ալի
նատտէսի թիւ 38, Իգտամ լրագրին դէմ:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԱՏՄԱՆՈՒԹՅԱՆ
ՏՊԱՐԱՆԸ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԱՏՄԱՆՈՒԹՅԱՆ
ՏՊԱՐԱՆԸ 38. Իմաստ. Լուսինքն Վր:



ՀԱՆԴԵՍ
ՏԱՍՆՕՐԵԱՅ

هازا كيدا ق
مجموعه علوم

HANKRIDAGUE

JOURNAL ARMÉNIEN ENCYCLOPÉDIQUE

Ե. ՏԱՐԻ — ՆՈՐ ՇՐՋԱՆ

ԹԻԻ 31

20 ՍԵՊՏԵՄԲԵՐ 1902

ԱՆՈՒՄԱԿ ՏՂԱՆ



Անձն է շատոնց ելեր հորիզոն,
Շատոնց է բացուեր թաղին վարժարան,
Դեռ գիրքերն թուսիկ կը փնտռէ հոս հոն,
Մինչ իր ընկերները դպրոց կ'աշտորան.
Մեղրամոմի գոյնն առած դեփ դեղին,
Իր դէմ կը ցցուի յանկարծ ֆալսխան.
Հագիւ կը թողու բունն ու անկողին,
Անառակ տղան:

Շատ ուշ... վերջապէս գտած իր թուղթեր,
Դժգոհ ձեռք կ'առնէ դպրոցին ճամբան,
Իր աշուրներէն քուն կը թափի դեռ,
Մտքին մէջ կերպ կերպ բաներ կը ծփան.
Իր ինչ հոգն ուսում, ինչ փոյթ վարժառուն,
Քրտնիլ օրն ի բուն՝ նիշի մը փոխան.
Ինք չըլլա՛յ պիտի գրող կամ գիտուն,
Անառակ տղան:

Ամէն բան մուծ մուծ՝ իր շուրջն ու վերեւ,
Դպրոց կը մտնէ... ինչ անհուն տանջանք
Կը տեսնէ՝ հոն՝ ան՝ տաժանք ակնհերեւ —
Գրիչ, գիրք մէյ մէկ փորձանքներ, ցուցա՛նք —
Չէ՛ չը՛ պիտի հոն փակուի ու ճգնի,
Թէ զինքը նոյն իսկ հանձն կախաղա՛ն.
Իր կոչումն ունի յայտնի կամ գաղտնի՝
Անառակ տղան:

Մեծ խօսի՛կ, պոռոտ ու չարամճի՛,
Դասատուին առջեւ կեցեր է հիմայ,
Ու դասերուն դէմ գայրո՛յն է կ'աճի,
Երբ կը ծամծըմէ բանե՛ր մ'ակամայ.
Երբեմն ափս՞էն՝ աչի՛ր վայրահակ՝
Ձեռք'ըն ու ոտքեր կարծես կը դողան.
Կը փորձէ՛ մոռնալ բնոյն՝ ստահակ,
Անառակ տղան:

Դասէն ե՛տր... կրկին նոյն ծոյն է անպէտ,
Նոյն չար օրինակն իր ընկերներուն.
Փողոցի՛ տըղոց սիրական ասպետ,
Աղտոտ խօսքերու՝ մասնագէտ ներհուն.
Երզում, սուտ, կեղծիք՝ ծամոցն են բերնին,
Վէճ, կազ իր չուրջը կուռ կուռ կը տեղան.
Բուն իսկ աշխարհիկ մարդն է ան՝ ինքնին,
Անառակ տղան:

Դպրո՛ց... սընամէջ այդ զանկին ներքեւ՝
Պզտիկ կամ մեծ բոյն չը շինեց բնաւ.
Մ'հ, խղի խաթն իսկ տատաւածապարզեւ,
Տէրոջ սուրբ երկիւղն՝ իր մէջ չի ծնաւ.
Ցուփուծիւն, ծաղրանք ու խօսքի՛ր լիտի,
Անոր պատուական ընկերներն եղան,
Ազնիւ ծրգողութեան չ'ունենայ պիտի,
Անառակ տղան:

Իր ծնո՞ղքն հապա... մի՛ հարցնէր, մի՛,
Անոնց սիրտցաւն հոս պատմել չէ՛ հընար.
Բաշեկամ ծանօթ՝ բսին մի առ մի,
Ինչ որ հայր ու մայր ըսել չեն կրնար.
Դրախտէն ելած գաւազանն ու ծեծ,
Շատ պատուեցին զինք, Վկա՛յ՝ զրատեցան.
Պատիժի բոլոր բաժակներ կոնծեց՝
Անառակ տղան:

Օր մ'ալ... խօսք, խրատ՝ մէկ սիրտ, մէկ բերան.
Ազդեցութիւննին ալ կորսնցուցին.
Յանդուզն՝ մինչեւ լոյս կը չափըքիւր ան,
Երկայնքն ու լայնքը՝ Թաղին փողոցին.
Մինչեւ ճարահատ Տեսուչ, Տնօրէն,
Ապագան ըրած ոտքերու կոխան,
Դուռնէն դուրս ըրին,
Անառակ տղան:

Ամէն օր մ'ենի երբ լոյս հորիզոն,
Երբ շատոնց փակուած կ'ըլլայ վարժարան,
Յուսիկն է՝ խել խօլ կը վազէ հոս հոն,
Աչքն՝ ընկերներուն՝ որ Դուռն կ'արտորան.
Մեղորմամբի պէս դէմքն ալ դիմի դեղին,
Մոռցած վարպետին ծեծն ու Ֆալսան,
Անդուլ կը չափէ երկայնքը Թաղին.
Անառակ տղան:

1902 Յուլիս 31 Տարէնտէ

ՄԿՐՏԻՁ Ա. ԹՈՒՐԵԱՆ



ԲԱՐՈՅԱԿԱՆ ԵՒ ԳՈՐԾՆԱԿԱՆ

ԴԱՍՏԻՆԱԿԱՆ ԿՈՒԹԻՒՆԸ

ԱՂԶՆԵՐԻ ՎԱՐՃԱՐԱՆԻ ՄԵՋ

« Հաստատել խորհելու, զգալու
գործելու սովորութիւններ. ահա
անոր մէջն է ամբողջ դաստիարա-
կութիւնը »:

Գ. — ՄԱՐԴԿԱՅԻՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆԸ

ԾԵՆՆԱՎԱՅՐԸ: — ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹԻՒՆՆԵՐ ԴԵՊԻ
ՄԵՐ ՀՈԳԻՆ — ԱՐՏԱՔԻՆ ԲԱՐԻՔԵՆԵՐ

1. Մենք միայն մեզ համար չենք աշխատի

Դպրոցական աշակերտուհի մը դեղձ մը
ուտել է ետք կուտը նետեց ճանապարհին
վրայ: Մերունի մ'առաւ զայն և ձօռակայ
դաշտին մէջ անկեց Փոքրիկ աղջկիւր ըս-
կըսաւ խնդալ ըսելով, « Ի՛նչ գաղափար,

խեղճ ծերունին պիտի մեռնի դեղձին բուս-
նելէն առաջ: »

Շատ տարիներ անցան: Մերունին մե-
ռաւ: Այն աշակերտուհին որ շատ տարիներ
է ի վեր այդ քաղաքէն մեկնած էր ա-
մուսնացած վերադարձաւ: Ամառուան մէջ
օր մը այն ճանապարհէն կ'անցնէր, շատ
ծարաւցած: Երիտասարդ մը տեսաւ, որ
ճանապարհին ձօռիկ եղած ծառէ մը դեղ-
ձեր կը հաւաքէր: Հատ մը խնդրեց զովա-
նալու համար: Երիտասարդը շուտով կա-
տարեց խնդիրքը անոր բսելով, « Այս ծա-
ռը իմ պապս տնկած է, որ փոքրիկ աղջը-
կան մը նետած 'կուտն առած է եղեր: »
Այն ատեն կինը կը յիշէ իր պատմութիւնը,
և մոքէն կ'օրհնէր ծերունին, որ նախա-
սեսած էր ոչ թէ իրեն համար, այլ իրմէ
ետքը եկողներուն համար:

Մեր իրականապէս բարի եմ՝ առաւել ու-
րիշներուն համար կը մտածեմ քան թէ իրենց,
նոյն իսկ փոքր պարագաներու մէջ:

2. Մարդկային Ընկերութիւնը

Երբեմն դուք ձեզ հարցուցած էք, թէ
ինչո՞ւ համար և ինչպե՞ս կազմուած է գիւ-
ղը, քաղաքը, ուր կը բնակիք. թէ ինչո՞ւ
համար այս տները խմբուած են. ինչո՞ւ
համար ամենուն աւելի յարմար չէ երեցած
դրացիներէ հեռանալ:

Որովհետեւ մարդիկ բոլորն ալ իրարու
պէտք ունին: Իւրաքանչիւր ոք ամենուն
օգտակար արհեստ մ'ունի և բոլորս վը-
տանգի ժամանակ պատրաստ ենք միարա-
նիլ երկիրը պաշտպանելու համար:

Ահաւասիկ մարդկային ընկերութիւնը,
ահա թէ ինչո՞ւ համար կազմուած է և թէ
ինչո՞ւ համար շինուած են քաղաքներն ու
գիւղերը:

Փոքրիկ աղջկաներ, դպրոցն, ուր կը
գտնուիք՝ ընկերութեան պատկերն է: Հոն
թերեւ տարբեր կերպով կ'աշխատիք, բայց
մի և նոյն նպատակով կը դաստիարակուիք
կուսանիք, որպէս զի վերջն իրար օգնէք
աւելի դիւրութեամբ: Դպրոցական կեանքն
ընկերական կեանքի նախափորձն է: Հոն
կը պատրաստուի մարդ կատարելու իր ա-
պագայ դերը: Ընկել լուրջ կից եւ ճնարար
ընթացիքի կատարեալ մայր մը:

3. Մարդկային Ընկերութեան բարեարութիւն

Փոքրիկ աղջիկ, շատ լաւ կը գտնես այն հացի կտորն որ մայրդ տուած է քեզ ուտելու համար, դուն լաւ ախորժակով կ'ո՞ւտես: Տաք հազուադ մը շատ յարմար կը գտնես ձմրան համար. յարդէ մեծ գլխարկ մը արեւին դէմ և կրկնակօշիկ՝ անձրեւոտ օրերիւ համար: Կ'ըսես թէ հաճելի է գիշերը լուսաւորուած մաքուր և լաւ պահուած փողոցներու մէջ քաշելը: Որո՞ւ կը պարտիս այս բոլորը: Ընկերութեան. այլիմեք անհատներու խումբին, որոնք միացած են իրար օգնելու համար. թող երկրագործն այլ ևս չ'աշխատէ երկիրը, ոչ ալ ցորեն ցանէ, դուք հաց պիտի չունենաք. թող ոչխար չբուծանեն, այլ ևս բուրդ պիտի չունենաք, ոչ վերաբրիւ և ոչ ալ ուրիշ զգեստ: Դարձեալ ընկերութեան կը պարտիս սովորած բոլոր լաւ բաներդ, որոնք միտքդ կը մշակեն և սիրտդ կը կազմակերպեն. Դու կրնաս ապրիլ միայն մարդկային ընկերութեան մէջ և ընկերութեամբ: Դու ընկերութեան համար կ'աշխատիս ինչպէս որ անոնք ալ քեզ համար: Խորհե՛ բոլոր նմաններուն օգտակար լինել քու գործունէութեամբ և լաւ ընթացքով:

4. Մարդկային Ընկերութեան հիմք

Չորս հատ փոքր աղջիկ կը միանան խաղալու համար, իւրաքանչիւրը կը բերէ իր խաղալիքը, իր պաճուճապատանքը, իր ամենէն գեղեցիկ գիրքը՝ ուրիշներու տրամաբարութեան տակ դնելու համար, որպէս զի ամէնքն ալ օգտուին: Բայց ահա անոնցմէ մին կը հաւաքէ գրքերը, խաղալիքները պաճուճապատանքները և ոչ մէկին կը թուղու անոնց դպչիլ: Անմիջապէս միւս երեք սղաքն անկէ կը գատուին, այլ եւս համամտութիւնը չտիրէր անոնց մէջ, որովհետեւ արդարութիւնը, ո՞ր ամէն բանի հիմքն է ալ ևս չտիրէր անոնց միջեւ:

Այսպէս է նաեւ մարդկային մեծ ընկերութեան մէջ: Որպէս զի տեւական եւ հաստատուն լինի, պէտք է որ արդարութեան վրայ հիմնուի: Պէտք է որ մին կարծէ թէ ամէն իրաւունք ունի եւ միւս՝ ամէն պարտականութիւն. պէտք է որ իւրաքանչիւրն ընդունի իր աշխատութեան հատուցումն և

ըրած Զանքերուն վարձատրութիւնը. պէտք է իւրաքանչիւրին ստացուածքը յարգել, և ճանչնալ ուրիշին իրաւունքն. ինչպէս որ կը ճանչնան իրենցը:

Երիտասարդ աղջիկներ, դպրոցին մէջ սովորեցե՛ք արդարութեան վարժուիլ. յետոյ ձեր կեանքի ընթացքի մէջ դիւրաւ պիտի գործադրե՛ք:

5. Մարդկային եղբայրսիրութիւն

Իւրաքանչիւրին հատուցանել ինչ որ վայել է, չարիք չընել իր նմաններուն, այնպէս գո՞ծել, որ ճանչնանք թէ ամենքն ալ հաւասար ենք: Ահա արդարութիւնը:

Բայց ինքնիրեն ըսել, « ամէնքս եղբայրներ ենք և եղբայրներու քոյրերու պէս պէտք է իրար սիրենք, իրար օգնենք, իրար պաշտպանենք » . ահա եղբայրսիրութիւնը:

Երկու կի՛ն մէկ մէկ տղայ ունին, Հարուստ չեն, երկուքն ալ կ'աշխատին իրենց փոքրիկ սիրելիին սնուցանելու համար: Մէկը կը հիւանդանայ. ինչպէ՞ս ընել այս խեղճ աղան, ո՞վ պիտի սնուցանէ անիկա, ո՞վ պիտի զբաղի անով: Այն ատեն միւս կի՛նն բաւ հիւանդին. « Բանի մը վրայ մի՛ խորհիր: Բանի հիւանդ ես, քու տղադ իմս պիտի լինի, անոր համար պիտի աշխատեմ: Իմ աղա՞ քու կի՛նիդ հետ պիտի բաժնէ իրեն համար միայն ունեցածը: » Խեղճ կի՛նը ժպտեցաւ սիրտն երախտագիտութեամբ լի:

Ահա եղբայրսիրութիւն: Ասիկա արդարութեան պէս պարտաւորիչ չէ, բայց ով որ զործ կը դնէ այս, իր սրտին մէջ այնպիսի ուրախութիւն մը կ'զգայ, որուն ոչ մի բան կը համեմատուի:

6. Սեպհականութիւն՝ աշխատութեան պատշաճ

— Մարիամ, ի՞նչ ունիս.

— Օհ, Տիկին շատ քիչ բան, իմ գրքերըս, տետրակներս, մատնոցս, տետրերս և եթէ աւելի ձիւղն ըսեմ, գիտեմ որ այս ամէնը իմն չէ, այլ ծնողքիս, որոնք իրենց աշխատութեան ստակով գնած են:

— Սակայն, Մարիամ, եթէ մատնոց, ընթերցանութեան գիրքդ գողնային, չափաւոր վշտանայիր, թէպէտ և դու գնած

չլինէիր քու խնայած դրամովդ :

— Ոհ, այո՛, Տիկին :

— Ուրեմն ի՞նչ պիտի լինէիր, եթէ վերջը չատ տարիներ աշխատէիր, աշխատէիր խնայողութեամբ ապրէիր : Որչափ պիտի վշտանայիր, եթէ չարագործ մը տունդ կողոպտէր կամ պարտէզիդ ծառերը արմատախիլ ընէր ու բանջարեղէններդ կորզէր : Ուրիշներու սեփականութիւնը նուիրապան է : Այն ուր իր աշխատութեամբ բան մը ձեռք բերաւ, պէտք է խաղաղութեամբ զայն վայելէ : Ոչ ոք իրաւունք ունի անոր դըպչիլ :

7. Ամեն մարդու հանգստութիւնը յարգեմք :

Փո՛քր աղջիկ, աւելորդ է ըսել թէ ազատ ես բարիք կամ չարիք ընել : Այդ դու գիտես, քու խիղճդ քեզ փրօէ : Թերեւս չը գիտես թէ աջակողմի դրացիդ, ինչպէս և ձախակողմինդ նոյնպէս նաև ուրիշ ընկերներդ քեզի պէս ազատ են :

Հետեւաբար եթէ քրո՛ւն կարող ես նշատարանը շարժելու եւ ընկերներդ նեղացրնելու, երբ անոնք կը գրեն, անոնք ալ կարող են քեզի պէս ընել եւ քեզ նեղացրնել երբ դու կը գրես : Բայց դու այս բանը պիտի չընես եւ ոչ ալ անոնք, որովհետեւ ամէնքդ ալ գիտէք թէ պէտք է ուրիշին հանգստութիւնը յարգել : Ընկերներդ կ'ուզեն գրել, զանոնք մի՛ նեղացնէր : Կ'ուզեն դասերը սովորիլ՝ ազմուկ յի՛ ըներ, հետեւին մի՛ խօսիր : Նոյնպէս երբ դուն ուզես գրել կամ դպրոց սովորիլ՝ անոնք ալ բան մը պիտի չընեն քեզ անհանգիստ ընելու համար : Որովհետեւ քու հանգստութիւնդ սահմանուած է ուրիշներուն հանգստութիւնովը : Դու իրաւունք ունիս քու հանգստութիւնդ գործածել բայց այն պայմանով որ չընրջդ տղաքներդ հանգստութիւնը չխանգարես :

Տիկին Փ. ՀԱՋԱՐԱՊԵՏԵԱՆ



ՄՕՐ ՄԸ ՆԱՄՍԿՐ ԻՐ ԶԱՒԿԻՆ

Ան գիշեր, Մօսկն, տխուր երազ մը տեսայ : Յուրտ սենեակի մը մէջն էի, պարտաւած, բոլոր ստակա վատնած էի քեզ

մարդ մը ընելու համար, աղքատ էի ու դուն տխուր, տրտում, տժգունած բոլորովին կ'ըսէիր. « Բայց մայրիկ, մենք հարուստ պիտի ըլլանք : Ես ստակ պիտի վաստակիմ : Բժիշկ պիտի ըլլամ : — Բայց բան մը չես գիտեր դուն, պատասխանեցի քեզի. — Նկարի՛չ պիտի ըլլամ : — Բան մը չես գիտեր որ : — Քիմիագէտ պիտի ըլլամ : — Բան մը չես գիտեր... » : Ու դուն ինձի կը թուէիր բոլոր արուեստները և ես ալ կը պատասխանէի միշտ քեզի. « Բան մը չես գիտեր » : Ան աստե՛ն, դուն լալ սկսար. « Ինչո՛ւ միթէ ես բան մը չեմ գիտեր » : Ըսի քեզի. « Որովհետեւ երբ պզտիկ մանչ մըն էիր, երբեք մօրդ վրայ չէիր մտածեր. դուն կը խաղայիր ըսելով. « վաղը պիտի աշխատիմ » : Ու հիմա, բան մը չես գիտեր, որ ես վիշտէս կուլամ ու ամօթէս պիտի մեռնիմ :

Բայց ասիկա ամօթալի երազ մըն է, չէ՞ զաւակ : Դուն կ'աշխատիս... : Օ՛ն, ալ չեմ լար :

ՍԱՌԱ ՊԵՏԻԱՌ

Թարգ. Վ. Յ. ԳԱՐԱԿԱՆԵԱՆ

ՍՐՏԻ ԷՋԵՐ



ձամբորդը՝ երբ ոտքը դրնէ գլխուդ վրայ, Ու քեզ յաղթած՝ հանգչի՛, կարծես կը թովա՛յ Զգացումով մ'անբիծ, ու ալ իր հոգին երբեք մեզ կ'արփաքե՛ւ կաթոգին, Արծիւին պէս, որ լայն բացած իր քեւեր՝ Սարեղ, ո՛վ լեռ, կը սաւառնի՝ դէպ ի վեր :

* * *

Ես կը նանչնամ սի՛րս մը մաքուր, որ համակ Քեզ պէս հազած եր զգեսներ բո՛ւք ներմակ, Ու Աստուծոյ աւելի մօ՛տ եր Անի, Որքան, ո՛վ լեռ, դուն տակաւին չե՛ս երկնի. Առջի անգամ իր վին նախքան երբ տեսայ, Մահկանացուի համար, ըսի, բա՛րձր ե սա՛ :

(Նմանողաբար)

Մ. ԽՊԴԻՐԵԱՆ



ԼՈՒՍՆԱԶՈՒԿԵՐԸ

Տեսակ մը ձուկ կայ որու մարմինը այնքան ճնշուած, տափակցած է, որու ձեւը այնքան կլոր է որ սկաւառակէ մը շատ տարբերութիւն չունի։ Ասոր համար լուսին, արեւ, և այլն անունները կուտան այս ձուկերուն որոնք ընդհանրապէս իբր մոլասկներ ճանչցուած են։




Բարեյուսոյ Գլուխէն Սկսեալ Սինչեւ Հիւսիսային ծով՝ Պրոտր ջուրերուն մէջ կը գտնուին ասոնք։ Ցերեկը արծաթի պէս փայլունութիւն մը ունին, իսկ գիշերը կը փոսփորափայլին։ Երկու ոտք երկայնութիւն և նոյնչափ ալ բարձրութենէ աւելի մեծ հասակ մը բնաւ չեն ունենար։

Մոլասկները՝ ձկնորսի բոլոր ցանցերը կը պատռեն կը փախչին, նոյն իսկ եթէ բռնուին ալ օգուտնին մեծ բան մը չըլլար։

որովհետեւ միսերնին գէշ հոտ մը ունենալով չուտուիր։ Սինակ մարմինէն հալիւած իւզը կը վառուի և լեարդը կ'ըլտուի։

Բոլոր մոլասկները տափակ ու լարծուն մարմին մը չունին։ Կան որ կլորցած ձեւ մը ունին և մորթերնին ծածկուած է խիստ սուր փուշերով։ Այս ձուկերը զարմանալի յատկութիւն մըն ալ ունին. ջուրին մէջի օդը ծծելով տեսակ մը մորթէ քսակի մէջ

կ'ամբարեն՝ որով ուռած օդապարիկի մը նման կը դառնան և բոլոր ջուրին երեսը բարձրացած ըլլան։ Փուշերնին կը ցցուի մարմինուն բոլորտիքը շագանակի մը կանանչ կեղեւին պէս, այս տեսակներուն միսը թունաւոր է, և նոյն իսկ ըսողներ կան թէ ասոնց փուշերուն խայթուածքներն ալ թունաւոր են։



Ս Ր Տ Ա Շ Ա Ր Ժ

Աղմուկով ու ժխտով կը լեցնէին նա-
բողջ տունը: Սաթենիկ եւ Ռուբէն, կիրակի
որ մը, ոտքերնին գետինը կը զարնէին, կը
վազէին, կը վազուրուտէին ու իրարու ե-
տեւէ մէկ մը վեր մէկ մը վար կ'ընթանա-
լին. ոտնդուխէն վար ու վեր վազած ժա-
մանակնին, ամբողջ տունը կ'երերար. ան-
հոգ տղաք, երբէք չէին մտածեր որ իրենց
ծերունի մեծ հայրը, վարը, իր սենեակը
թիկնաթոռին մէջ կը քնանար: Իրենց մայրը
որ վարի սենեակը նստած կար կը կարէր,
կ'իմանար տղոց աղմուկը, բայց կը համբե-
րէր որ կարելի է վերջացնեն այս աղմուկից
խաղերը. ընդհակառակը քոյր եւ եղբայր
անկարգութիւնը ա'լ աւելի կը սաստկացնէին
այնչափ ուժգնութեամբ կը ցաթկուտէին
սենեակին մէջ որ վարի սենեակին մէջ գըտ-
նուած բոլոր առարկաները, հայրի, ապա-
կիններն, շրջանակներն եւ սենեակին ամբողջ
զարդերը կը ցնցուէին, կարծես երկրաշարժ
տեղի կ'ունենար: Մայրերնին այլ եւս չը
կրնարով համբերել, բարկութեամբ վեր կու-
գայ ու կը յանդիմանէ անոնց անխոհմու-
թիւնը, յիշեցնելով թէ՛ ինչպէս աղետը մեծ
հայրը հանդարտօրէն կը քնանայ, հիմա կա-
րելի է որ արթննայ ձեր բարձրաձայն աղ-
մուկէն, այս ըսաւ եւ տղոց թեւէն բռնեց
ու տարաւ այն սենեակն ուր կը քնանար
մեծ հայրը. ցուցուց ու անոնց ըսաւ. «Ա-
հաւասիկ մեծ հայրը, որ իր ընկերական,
բարոյական ու ընտանեկան պարտքերը կա-
տարած, այժմ խոր ծերութեան մէջ խղճի
հանդարտութեամբ իր հանգիստը կը վա-
յելէ:

«Ինքը որ հիմա կը քնանայ, շատ իսկ
աշխատած, տքնած ու իր ընտանեաց, ծնո-
ղաց ու զաւակաց բարեկեցութեան համար
հոգնած է:

«Կը յիշեմ զինքը երիտասարդ, ձեզի
չափ եղած ժամանակս, երբ կիրակի օրերը
եկեղեցի կը տանէր զիս ու հանդիսատես
կ'ընէր այն ամէն արարողութեանց, որոնք
եկեղեցին կը կատարուէին. ժամերով կը
գրկէր զիս եւ հետաքրքրութիւնս կ'արթն-
ցընէր:

«Կը յիշեմ զինքը աւուրգ եւ անտրտուն
որ զիս իր ծնգայը վրայ կ'առնէր, ազնիւ

տպաւորութիւններ ու լաւ զգացումներ կը
սերմանէր մտքիս ու սրտիս մէջ:

«Կը յիշեմ զինքը զուարճաւէր երիտա-
սարդ, երբոր կիրակի օրերը զիս կը տա-
նէր կանաչաւէս դաշտեր, ու մարդագետն-
ներ, որպէս զի միտքս բացուի, սիրեմ բը-
նութիւնը եւ անոր դնտոզն ըլլամ:

Ծերուկը անխիտ կը քնանար, Ռուբէնի եւ
Սաթենիկի մայրը կը շարունակէր, «այս կը-
թոտ ծունգերը անոր համար են կ'թոտ, որ
նախափազանց վազուրուտած է աստ անդ մեզ
համար:

«Այս ճաղատ դուխը, զոր դուք կը տես-
նէք, անոր համար այսպէս է ճաղատ, որով-
հետեւ ունեցած է իր մտածումները, խոկ-
մունքը ու նեղութիւնները միշտ մեզ համար:

Այս միջոցին ծերուկին դէմքը կը փայ-
լէր, պայծառ, անուշ եւ մաքուր դէմք մը,
զոր աւելի փայլեցուցած էին իր սպիտակա-
փառ մօրուքը եւ ալիքները, իր կակուղիկ
ձեռքը թիկնաթոռէն վար կ'ախուտած կը մը-
նար, դեռ կը քնանար եւ միշտ խնդում մը
կար իր սպիտակ դէմքին եւ վարդագոյն այ-
տերուն վրայ, ծերուկը իր քունին մէջ կը
ցուցունէր կատարեալ հանդարտութիւն հոգ-
ւոյ եւ խղճի, այն ժպիտը որ իր դէմքին
վրայ կ'երեւար քունը տարած ժամանակին
ուրեցած մէկ մտածման հետքը ու արդիւնքն
էր անշուշտ, որովհետեւ իր թոռնիկները ու
սիրելիները կը մտածէր: Տղոց մայրը կա-
մաց մը իր հօրը մօտեցաւ ու անոր դուղդո-
ջուն ձեռքերը համբուրեց. իրենց մօր հե-
տեւեցան նաեւ Ռուբէն եւ Սաթենիկ, պատ-
կառօտ էին, մէկ մը իրենց մօր, մէկ մըն ալ
ծերունիին կը նայէին. մատանց ծայրերուն
վրայ կ'ոխելով զգուշիւ կը քալէին. մայ-
րերնին յուզուած էր եւ այսպէս աղաղակեց
նայելով հօրը երեսը. քնացիր խաղաղիկ, ա-
նուշիկ հայր, արժանի ես այս հանգստեան:
Բո՛ւ թողնիկներդ պիտի գիտնան յարգել ա-
լեւոյթդ եւ միջոցախօսի մեծարեն ու սիրեն
դքեզ...» Մայրը իր սենեակը քաշուեցաւ
երկու տղայք արցունքոտ աչքերով հեռացան
գլխիկոյր եւ մտած կ'ոտ:

ՕՐ. ՆՈՒՎԱՐ ՌԷՅԻՉԵԱՆԻ

Աշակերտուհի Բարձր. Բ. կարգի Ս. Միսրոպ.
վարժարանին Կէտիկ-Փաշայի



ԿԱՊՈՒՏԱԿ ԿԱՂԱՍԻՐ

(ՀԵՔԵԱԹ)

Կապտագոյն կաղամբը ընտիր աղցան կ'ըլլայ: Հո՛ն է իր յատկութիւնն, ու իր յաղթանակը: Իր կաղամբէ դերը կը կատարէ սակայն, այսինքն՝ անիկա կը միանայ հաճութիւնով երջիկին հետ և պատուական ապուրներ կ'եփուի, թէպէտ քիչ մը տարբեր գոյնով:

Թողէ՛ք որ, հիմա ըսեմ՝ ձեզի միամիտ աւանդավէպը կապուածակ կաղամբին:

Ժամանակով կար, չեմ գիտեր Ծռանայի ո՛ր խեղճ նահանգին մէջ, տուրք եպիսկոպոս մը որ գթութեան մարմնացումն էր կաղին մը կը բաժնէր աղքատի մը հետ, ու իր ձեռուրները միշտ պատրաստ էին բարձրանալ՝ օրհնելու համար. բացուի՛ր ապու համար: Դժբաղդները կարասիներու տէր կ'ընէր, իր ունեցածներէն տալով, ու ամէն իրիկուն իր սեղանին վրայ կը գտնուէր բացակային սպասը, աղքատի մը ուրու գաղտնապահ ձեռքերով կը կրէին իրիկուան ռէջ իսկ ամենօրեայ ճաշը:

Հողագործի մը որդին, այս արգոյ եպիսկոպոսը, բարիք ընելու սէրէն ետքը, միայն դաշտերը կը սիրէր. մանաւանդ որ, հազուադիւր չէր հանդիպիլը Գերապայծառին՝ մարգագետիններու, արտերու, անտառներու և բլրակներու մէջ, մեծաքայլ ճեմելով դաշտին մէջտեղ, որ երեւոյթը ունէր դէպի երկինք դիմելու՝ աղքատին հիւղակը ու հիւանդներուն սնարը երթալով:

Օր մը ուրեմն, մեր եպիսկոպոսը պտոյտի եղած էր:

Մէկէնիմէկ պառու կնիկ մը կը նշմարէ երեւոյթը գլխով: Որպէս ժամացոյցի մը ճօճալակը, աւելի դեղին երեսի գոյնով քան սուրբ Լուդովիկոսի ժամանակուան մագաղաթ մը, մարմինը կորակոր կախկալմամբ մը նման ու դալարափուշէ գաւազանի մը վրայ յենած:

Իւրաքանչիւր քայլին, պառաւ կքելու երեւոյթը ունի ծանրութեանը տակ ահագին կաղամբի մը ողկ կէտերայ իր, ուսին վրան:

Իր կաղամբը բարձր քարի մը վրայ դը-

նելով, կը կռթնի չնչասպառ և դողդոջուն, ընկուզենիի մը արմատին դէմ:

— Բարի լոյս, ազնիւ կին, ըսաւ եպիսկոպոսը, շիտակը, ահաւասիկ բեռ մը որ շա՛տ ծանր կը թուի ձեր ուսերուն:

— Ապահովաբար, Սրբազան Հայր, կը պատասխանէ գեղջիկուհին, որ իր երկար մեկնոցէն կը ճանչնայ մեր եպիսկոպոսը: Ինչու որ ես ալ երիտասարդ չեմ, դիտէ՛ք: Շագանակենիներու ատենը քառասունընը տարեկան պիտի ըլլամ:

— Եւ գայն հեռու տեղ մը պիտի տանիք, ձեր բեռը:

— Սա՛ տնակը որ կը տեսնաք բարձրը, սա՛ բլուրին վրայ՝ Մօմ չէ՛...:

— Անտարակոյս, բարի կին, քաջ եղիք, չա՛տ տեղ ունիք:

— Յետոյ աւասիկ գիշերը որ կուգայ՝ կաղամբին եփելուն պիտի սպասուի, որպէս չի ուտուի: Պէ՛տք է որ մեկնիմ' ինչեցէք Սրբազան Հայր, բարութիւնը ունեցէ՛ք սա՛նկ ուսիս վրայ դնելու կաղամբը:

— Աղկէ աւելին պիտի ընեմ, մայրի՛կ, ինձի տուէք ձեր կաղամբը ու բռնեցէ՛ք բալուկէս: Մինչև ձեր դուռը պիտի ընկերանամ ձեզ:

Ըսելն ու ընելն մէկ եղաւ, ճամբայ ինկան. բարի կրօնաւորը կաղամբը տանելով, ու պառաւ շինական կինը՝ շատ դո՛հ Գերապայծառին թեւին կռթնելուն:


Խրճիթին դուռը հասնելով, եպիսկոպոսը իր բեռը վերնտին չբարի կնոջ տուաւ անոր ձեռքին մէջ սահեցնելով ճերմակ ստակ մը իր կաղամբին պէտք եղած իւղը գնելու համար:

Բայց ո՞ր զարմանալիք, հազիւ իր պատահածը պատմած է, զարմանքի աղաղակ մըն է դուրս կը պուրթկայ իր ամբողջ բերնէն. կը տեսնէ որ կաղամբը, առաջ բոցանշոյ կանանչի կը զարնէր, հիմա գոյնը աւեր է եպիսկոպոսին զգեստին:

Ու այդ ժամանակէն ի վեր է որ կապուտակ կաղամբներ կան:

ՏԻՒՊԵՌ ՏԻՒՄԱՆԴԷԼ


Թարգ. ՎԱՀՐԱՄ Տ. ԴԱՐԱՅԻՆԵԱՆԻ



քերէն ընկճուած մեռաւ, կուոյ դաշտին վրայ կանգնուած իր յաղթական վրանին տակ (362)։ Յունաստանի վրայ Եպամինոնդի ձեռք ստացուած Թէբական գերիշխանութիւնն ալ իրեն հետ մեռաւ։

ԷՄԻԼ ԶՈԼԱ

Էմիլ Զօլա ծնած է 1840ին Բարիզի մէջ, Ֆրանսացի մօրմէ և իտալացի հօրմէ։ Իր պատանեկութեանը բնաւ յաջող դպրոցականի մը համբաւն ունեցած չէ, նոյն իսկ ապարէզ մտած է առանց պատկուորի աստիճան ունենալու (երկրորդական վարժարանի մը դասընթացքն աւարտելու)։ Բարիզ



գալով հրատարակիչ Հաշէթի քով մտնելով ժամանակակից գրական մեծ անձնատրուութիւններու հետ յարաբերութիւն հաստատել սկսաւ. յամառ ու աննկուն աշխատութիւնով մը ձեռք ձգեց այն կարողութիւնը՝ զոր մենք իբր տաղանդ մը կ'ընդունինք իր

վրայ, Բարիզի ժողովուրդը շուտով ճանչցաւ գինքը իր կորովի՝ բայց ստորին ոճին համար. շատ աժան շահեցաւ ժողովրդականութիւն մը՝ որ կը տրուի աղտոտ գրութիւններուն։ Տրէյֆիւսի գործին մէջ ունեցած դերը գինքը ճանչցուց ամբողջ Եւրոպայի։

Զօլա՝ իբր պետ կը նկատուի բնապաշտ դպրոցին. ինքը միշտ Պալգաքի անունը իրեն զօրավիգ ընելով յաւակնութիւնը ունեցաւ Մարդկային կասակեցութեան (Comédie humaine) նմանը արտադրելու, և պնդեց թէ յիշաւի կապ մը կայ իր (Զօլաի) տարրեր վիպասանութիւններուն մէջ՝ որոնք Rougon Mackart (Բ. կայսրութեան ժամանակ ապրող ընտանիքի մը բնական ու ընկերական պատմութիւնը), անուան տակ համախըմբուած էր։ Իր ամենէն լաւագոյն արտադրութիւններն են L'Assommoir (1877 ին գրած), որու մէջ ճշգրիտ կերպով կը նկարագրէ Բարիզի ժողովուրդը և Germinal (1885ին գրած), որ ուսումնասիրութիւն մըն է հանքերու աշխատանքներուն վրայ, և որու մէջ դիւցազներգութեան հով մը կը տեսնուի։ Զօլա՝ ամենակատմբեալ նկարիչը եղած է մարդկային ամէնէն ստորին կիրքերուն։ Նկարագրութեան մէջ ալ շատ վարչի մնար։ Մէկ պարտէզի մը նկարագրութիւնը կ'ընէ... երկու հարիւր էջի մէջ (Աբբայ Մուրէի յանգամանք)։

Զօլայի մահը ամենէն անսպասելին էր. որովհետեւ շատ քաջառողջ երեւոյթ մը ունէր և նոր երկ մը աւարտելու վրայ բլլալը իր բարեկամներու իմացուցած էր։ Մահուան պարագաներուն վրայ դեռ կատարեալ ստուգութիւն մը չկայ. կ'երեւի թէ չըմինէն լաւ չբանելով՝ գիշերը դուրս տուած ածխական կազը լեցուցած էր սենեակը և շնչահեղձ ըրած գրագէտը։



ՀՈԳԵԲԱՆՈՒԹԻՒՆ

ՃՇՄԱՐՏԻՆ ՍԷՐԸ

Ամէն մարդ, օրանէն սկսեալ, պէտք ունի ճանաչելու, գիտնալու եւ հասկնալու Անձանօթին եւ չբացատրուածին հանդէպ

անհանգիստ ենք, տղան հարցումներով կ'ընկճէ զինք շրջապատողները: Հաւանեցան ոմանք պնդել թէ կենդանիներն անգամ ունին ճշմարտին սէրը եւ հետաքրքրութիւն մը նման մերինին: Անդդիացի բնագէտ մը կ'իշխատակէ ի պաշտպանութիւն այս իմաստասիրական ձեռնարկութեան հետեւեալ իրողութիւնը: Վրան ծածկուած կողովի մը մէջ փակուած մողէս մը բերուած էր Լոնտոնի կենդանաբանական պարտէզը, եւ դրուած կապիկներու գառագեղին մէջ: այս կենդանիներու առաջին շարժումն եղաւ փախչիլ: Բայց քիչ քիչ փոխելով իրենց կարծիքը, դէպ անոր մօտեցան զգուշութեամբ եւ կողովին ծածկոյթը վեր առին: Կապկապաշուն Տարվին մարդկային հետաքրքրութեան յարեւման երեւոյթ մը կը տեսնէ այս բանիս մէջ: Մենք չենք հաւատար այս յարեւմանութեան:

Երկու տեսակ հետաքրքրութիւն կայ մարդուն ինքիւ մէջ. անոնցմէ մին գերազանցութեան նշան մը չէ բոլորովին, եւ չունի ոչինչ մասնակցութիւն ճշմարտին զուտ սիրոյն հետ: Այս կապիկներուն մէջ, նորութեան զգացումը, պահպանութեան բնապէր, կասկածը, որկրաժէտութիւնը՝ կարելի է, առաջ բերած են յայտնապէս բոլոր երեւոյթը, հոս ան հետաքրքրութիւնը չէ որ կը փնտռէ փնտռելու հաճոյքին համար, եւ առաջդիմութիւն ընել կուտայ գիտութեան: Մենք իսկ երբ ուշադրութեամբ կ'դիտենք փառաշուք յարկ մը, փայլուն արդուպարզ մը, երբ կ'ուզենք գիտնալ մէկն ինչ կ'մըտածէ, կամ ինչ որ ուրիշն իրեն ըսած է, մենք կ'շարժինք ստորին կարգի հետաքրքրութեամբ մը որուն սկզբնաղբիւրն է երբեմն համակրանքը, աւելի յաճախ անձնուրութիւնը կամ շարակամութիւնը:

Ասոնք ճշմարտին սիրոյն նկարագիրը չեն: Ըշմարտին սէրը կ'կայանայ փնտռելուն մէջ ճշմարտը նոյն իսկ ճշմարտին համար. անոր համար միայն, առանց մեզ հարցնելու թէ պիտի կրնայ մեզ իսկ կամ այլոց օգտակար ըլլալ: Թէպէտեւ գիտութիւնն ա՛մէն բաներէ աւելի օգտակարն ըլլայ. կ'ծառայէ ճարտարագործութեան. գիտունին համար անոր շահեկանութիւնը անոր օգտակարութենէն չէ. գիտունը կ'փնտռէ գտնելու

համար, հաճոյք կ'զգայ ստանալուն համար ճշմարտը, նոյն իսկ ան ըլլայ անօգուտ, կ'ուզէ գիտնալ գիտնալու համար, բան մը զինքն իր այս ընթացքէն կարող չէ կասեցնել, նոյն իսկ, եթէ անձնականութիւններով պանքներով կաշկանդուած ըլլայ:

ԳԻՏՈՒԹԻՒՆՆ ՈՒ ԻՄԱՍՏԱՍԻՐՈՒԹԻՒՆԸ

Մարդկային հետաքրքրութեան մեծ արտայայտութիւններն են գիտութիւնն ու իմաստասիրութիւնը, որ ճիշդը խօսելով մի եւ նոյն երկու աստիճաններն են: Երբ մարդ մը տրուած որոշ իրողութեան մը նկատմամբ կ'փնտռէ մերձաւոր պատճառները եւ անմիջական արդիւնքները, եւ կամ թէ՛ քիչ մ'աւելի առաջ մղուելով կ'բարձրանայ երկրորդական պատճառներու շարքին ու կ'իջնէ արդիւնքներու շարքին, գիտութիւնն ի գործ կ'դնէ, այսինքն կ'փնտռէ եւ կ'շարայարէ կրցածին չափ, որչափ գտնէ, ստոյգ այլ մասնակի ճշմարտութիւններն: Սակայն որ աստիճանին ալ հասած ըլլայ գիտութիւնը եռանդուն ու անյագուրդ հետաքրքրութեամբ օժտեալ մտքերը կ'ուզեն երթալ աւելի հեռուն, հարցաքննումներ կ'ընեն իրաց ամբողջութեան վրայ, աշխարհքին վրայ նկատելով զայն իբրեւ ամբողջութիւն մը:

Ո՛րկէ կուգայ այս աշխարհքը, ի՞նչ է ան: Ան ո՛ւր կ'երթայ: Ի՞նչ է իրաց վերջին գաղտնիքը: Այս վերջին խնդիրները կը քրքրէ, երբ կ'անկայ ամբողջ ճշմարտութեան, իմաստասիրական միտք ունի: Բնագանցագիտութիւն ի գործ կ'դնէ:

— Բնագանցագիտութիւն (մէթաֆիզիզ). ինչ որ ֆիզիքական, բնական բաներէ անդին եւ վեր է ինչ որ բնական խնդիրներէ վերջ կուգայ: Բնագանցագիտութիւնը իմաստասիրութեան ամենէ աւելի բարձր մասն է որ կ'ճառէ իրաց էութեան, անոնց առաջին ծագման եւ անոնց վերջին վախճանին վրայ: —

ՅԱՅՏԱՐՈՒԹԻՒՆՔ ԱՅՍ ՀԱԿԱՄԻՏՈՒՄԻՆ

Ըշմարտութեան սէրը կ'յայտնուի, ամէն մարդու համար եւ ամէն բանէ առաջ, բոլոր նական զիւրահաւանութեամբ մը: Մենք

պնսպէս մը եղած ենք ճշմարտութեան համար Բ որ մեր հակամիտումն երբէք ի սկզբան չ'կատկածիր սուտէն ու մոլորումէն. բնազդ մաքր կ'հաւատանք մեզ ըստածներուն: Տըղան էապէս դիւրահաւան է, ցորչափ զայն խաբած չեն. բնական ձկտում մ'է այս որմէ բաւական մեծ օգուտ մը չի քաղուիր:

Գիւրահաւանութիւնը կրաւորական է, անցողակի, ճշմարտին սէրը ներգործական, տիրողական ձեւ մը կերպ մը կ'առնու. երբ կ'արթննայ փնտռելու խռզարկելու ոգին քննութեանս գին. կ'արտայայտուի ան աւելի կամ նուազ սղեւորութեամբ, պարագային համեմատ, եւ կ'առաջնորդէ գիտական մեծ սրտոտութեան, մինչեւ ինք իր անձին մոհացման չափ որուն օրինակները բազմաթիւ եւ դիտութեանց եւ մեծամեծ Գիւտերու պատմութեան մէջ:

Ճշմարտասիրութիւնը (vérocité), կամ ճշմարտը ըսելու պէտքը կրնայ նաեւ երթալ մինչեւ զգհարեղծութիւն. երբ կ'հաւատանք թէ ճշմարտութեան մը վերահասու եղած ենք, կ'ուզենք զայն ըսել. դաւանասիրութիւնը (prosélytisme) այսինքն մէկը կամ ուրիշները իր կարծիքին, գաղափարին յանկուցանելու չափազանց սէրը. կ'այսնայ իր գիտցած իմացական կամ բարոյական ճշմարտութիւնը հռչակել սգւով չափ. տանիլ զայն հեռուն, նուիրել կեանքն իսկ ի հարկին անոր համար:

Առարկութիւն, Ստութիւն. — Բացասութիւն. — Բայց հոս առարկութիւն մը կ'ներկայանայ, ստութիւնը բնական չէ: Այնքան բնական է որ կրցած են ըսել « Տղան էապէս ստախոս մ'է »: Ասոր կ'պատասխանենք թէ ստախոսութիւնը կ'երեւայ արդարեւ կանուխէն, բայց արդէն սղան յատուկ փորձառութեան, կամ ծնողքին անձարակամութեան ու դէշ օրինակին պտուղն է: Տղան չի ստեր իր հաճոյքին համար, իր առաջին սուտին վրայ չի պարծենար, կ'կարմրի եւ կ'մօրը նայուածքէն կ'տանջուի. այս մասին իր կրած զգացումն երբեմն այնքան տառապեցողիչ է որ յանկարծ կ'յաղթէ՝ եւ անոր խոստովանիլ կուտայ թերութիւնը զոր պարտիւր կամ ծածկել կ'ուզէր:

Թովմաս Բէյա՝ Սկովտացի հանձարեղ ու գիտուն իմաստասէրն ըսած է շատ աւելի մտացի ու ճարտար. կերպով մը. « Մարդիկ

կրնեն ճշմարտը ախորժակով ուտելու պէս: կ'ստեն դեղ առնելու պէս »: Այսինքն կը ստեն ուրիշ նպատակի մը տեսակէտով, աւելի մեծ բարիքի մը համար, կամ զգուշանալու համար աւելի մեծ չարիքէ մը, սուտը միմայն միջոց մ'է ուրեմն, եւ միջոց մը որ կ'արժէ: Զափահապը քնքր թուարկածներէն աւելի ուրիշ պատճառներ ունի սղտելու. բայց այս պատճառներուն աղբիւրն են շահն ու սնապարծութիւնը: Սնապարծ մը, որսորդ մը, ուղեւոր մը կ'պատմէ յաջողութեան, կամ արկածներ, որք միայն իր երեւակայութեան մէջ գոյութիւն ունին. վասն զի ունայնամտութեանց եւ երեւնալու պէտքը յայնժամ ճշմարտասիրութեան բնազդումին կ'յաղթէ, բայց այս ոչինչ կ'պապացուցանէ այս բնազդումին գոյութեան հաւաակ:

Մարդուս համար ազդարարութիւն մ'է միայն որ այս հակամիտումի լարծուն զառութափին վրայ զգուշօրէն կոխել կամ քայլ առնել տալու է տղուն:

ՀԱՐԿԱԽՈՐՈՒԹԻՒՆ ԱՌԱՋՆՈՐԴԵԼՈՒ

ՏՂԱՆ ՄԻՇՏ ՃՇՄԱՐՏՈՒԹԻՒՆԸ ԸՍԵԼՈՒ

Ճշմարտութիւնն ըսելը պարտք մ'է. պարտք մ'է այս միանգամայն մեզ նկատմամբ եւ պարտ մը՝ այլոց նկատմամբ: Մարդ բարոյական անձ մ'է, եւ իր ամենէ աւելի անձուկ պարտքերէն մին է չի նուաստացընել իր մէջ անձը. հետեւիլ միշտ բանավարութեան խելքին: Սրգ՝ ի՞նչ է սուտը, ո՞չ ապաքէն ուրանալ, ժխտել է ինչ որ իմ խելքս ինձ իբրեւ ճշմարտութիւն կ'ներկայացնէ:

Ճշմարտութիւնը անենուն հայրենաթաւառանգ ստացուածքն է. հասարակաց բարքն է ան. երբ մենք զայն կը ծածկենք ուրիշներէն, երբ մենք զայն անսնցմէ կ'չորթենք, ճշմարտ գողութիւն մ'ըջրածի պէս մենք զմեզ յանցապարտ կ'ըլենք. մենք մեզ կ'սեպհականացնենք ինչ որ մեզ չի վերաբերիր: Այն որ կ'ստէ, կ'իարէ իր նիւնն, կ'եղծանի անոր վստահութեամբը կամ զայն չարնաչար կ'գործածէ, եւ չի յարգեր այն լուին հասկցուած պայմանագրութիւնը՝ դառն չինքը որ հնարդկային ամէն ընկերութեան

է որ շատ տեղեր գրաբարը օգնութեան եկած է աշխարհաբարին՝ արտայայտելու համար գաղափար մը որ իր բացատրութեան պարզ տարազն ունի ֆրանսերէնի մէջ։ Մէնզի հիմար, եւ շատեր մեզի համակարծիք են, ասանկ երկերու մէջ՝ աւելի լաւ է ֆրանսերէն նախադասութեան գիմաց հայերէն նախադասութիւն մը դնելու տեղ, եւրոպական այդ հարուստ լեզուով արտայայտուած մէկ խօսքը՝ քանի մը նախադասութիւններով բացատրուէր հայերէնի թարգմանուած ժամանակ։

Սակայն ինչ որ ալ ըլլայ ներկայ հատորը, յաջողած գործ մը կրնայ նկատուիլ իր թարգմանութեան մէջ, և կ'արժէ որ ամէն ուսումնասէր ունենայ անկէ հատ մը իր գրադարանին մէջ, որով զէթ նպաստած կ'ըլլայ մարդասիրական հաստատութեան մը, որու նուիրուած է գրքին ամբողջ հասոյթը։

ԳԻՏԱՍԵՐ

ԳԻՏԱԿԱՆ ԶԲՈՍԱՆՔ

ՃՐԱԳԷ ՇԱՐԺԻԶԸ


Նոր շարժիչ մեքենայ մը կը ներկայացնենք ձեզի՝ որ բանելու համար ո'չ չոգիի, ո'չ բեթբոլի, ո'չ ելեքտրականութեան պէտք ունի. ո'չ կաթսայ ունի, ո'չ միտոց, ընդամենը... մոմ մըն է, կատակ չկարծէք, դուք ալ մոմ մը առէք և փորձը անձամբ կատարեցէք։

Տաքցած խողով ասեղով մոմի մը ճիշդ մէջտեղէն լայնքին ծակեցէք, անանկ որ երկու ծայրերը հաւասարապէս դուրս մնան՝ զորս կը հաստատէք երկու գաւաթներու եզերքներու վրայ։

Երբ մոմին երկու ծայրերն ալ բռնկեցնէք, շուտ շուտ կը վառի և մէկ ծայրէն կաթիլ մը իւղ կը վազէ տակը դրուած պնակին մէջ. հաւասարակշռութիւնը կը խանգարի և լծակը կը ծռի՝ իւղը կորսնցնելով թեթեւցած ծայրը վեր բարձրացնելով։ Այս շարժումով վար իջած ծայրէն քանի մը կաթիլ իւղ կը վազէ, որով այդ ծայրը աւելի կը թեթեւնայ. մոմը կը ծռի միւս ծայրը վար բերելով. նորէն քանի մը կաթիլ իւղ կը հոսի և մոմը կը ծռի հակառակ ուղղութեամբ։ Այս շարժումները

առջի բերան շատ թեթեւ են, բայց եթէ թալով կ'արագանան և թէ աւելի կը մեծնան, մինչեւ իսկ մոմին ուղղահայեաց դիրք մը տալու աստիճան։

Շատ գուարճալի է այս խաղին ներկայ գտնուիլ, որ մոմին հատնելովը միայն կը վերջանայ։ Ազնիւ ընթերցողները գուցէ



գանգատին թէ մոմին երկու ծայրէն վառել կը խրատենք, սակայն թող մտածեն թէ առանց զոհողութեան հաճոյք չկայ։

Հիմա, կ'ուզէ՞ք որ մոմին շարժումը օգտակար բանի գործածէք, երկաթի բարակ թելերով խաւաքարտէ երկուց մարդու պատկերներ կապեցէք, որոնք զանգալ կը զարնեն, փայտ կը ողողեն, և այլն։ Կրնաք թուղթէ երկու մխոցներ շինելով շոգեշարժ մեքենայի մը երեւոյթը տալ։

ՈՍԿԵ ԲԶԵԶԸ

Շատ ժամանակ անցաւ յորմէ յետէ մը տերմօրէն կապուեցայ Ուիլիամ Լոկրէնտ անուն պարոնի մը հետ։ Հին Հիւկնօթ ընտանիքէ մըն էր ան, և երբեմն շատ հա-

բաւոտ էր. բայց կարգ մը դժբաղդութիւններ թշուառութեան մատնած էին զանիկա: Ազատելու համար այն ստորնացումէն, որ իր աղէտքներուն հետեւանքը պիտի ըլլար, թողուց Նուվէլ-Օրլէանը, իր նախահայրերուն քաղաքը, և հաստատուեցաւ Սիւլլիվան կղզիին մէջ, Քարլսթընի մօտ, Հար. Քարօլինի մէջ:

Ասիկա շատ տարօրինակ կղզի մըն է: Կազմուած է ծովի աւազէ, և շուրջ երեք մղոն երեայնութիւն ունի: Իր լայնութիւնը քառորդ մղոնէն չանցնիր: Երկիրէն բաժնուած է հազիւ տեսանելի փոքր ծովախորշով մը, որ կ'անցնի եղէգներու և մօրերու վայրի կոյտի մը մէջէ. սիրական ժամադրաւայր ջրահաւերու: Բուսականութիւնը, ինչպէս կրնանք ենթադրել, խեղճուկ է. կամ գրեթէ բոլոր բոյսերը ճոզած են: Հոն չենք կրնար որոշ տարածութիւն մը ունեցող ծառեր տեսնել: Արեւմտեան ծայրը, հոն՝ ուր կը տարածուի Մուլթրի անտառը, և ուր կը գտնուին քանի մը փայտաշէն խեղճուկ շէնքեր՝ որոնց մէջ ամառ առնեն կը բնակին Քարլսթընի փոշիէն և ջերմէն փախչողները. իրաւ կը պատահինք կարծահասակ թղթիներու, բայց բոլոր կղզին բացի այս արեւմտեան կողմէն և տխուր ու ճերմակ ծովափէ մը, ծածկուած է հոտաւետ մրտենիի խիտ մացառներով. տեսակ մը փայտ՝ որ շատ յարգի է անգլիացի ծաղկեմշակներուն համար: Թուփը հոս երբեմն մինչեւ տասնըհինգ կամ քսան ոտք բարձրութեան կը հասնի և կը կազմէ գրեթէ անթափանցելի անտառ մը՝ որ օդը կը խընկէ իր լոյսերով:

Այս անտառին շատ խորը, չիջ մը հեռու արեւելեան ծայրէն, այսինքն՝ կղզիին ամէնէն հեռու տեղը, Լըկրէնտ ինքը շինած էր փոքր հիւղակ մը. որուն շինութեան կ'ըզաղէր, երբ առաջին անգամ և դիպուածով իրեն հետ ծանօթացայ: Այս ծանօթութիւնը շուտով ճշմարիտ բարեկամութեան փոխուեցաւ, որովհետեւ այս մեծակեացին մէջ կար բան մը՝ որ հետաքրքրութիւն և յարգանք կը հրաւիրէր: Տեսայ թէ լաւ դատարարութիւն մը առած էր, օժտուած իմացական բարձր կարողութիւններով: Բայց մօրեւտեացութիւնը բոյն դրած էր անոր մէջ և մեղամաղձութեան

և յափշտակութեան ցաւալի յաջորդութիւններու ենթակայ էր: Ունէր շատ մը գիրքքեր, բայց զանոնք երբեք չէր դարձածէր: Իր գլխաւոր զբօսանքներն էին կենդանիներ և ձգուկ որսալ, թափառել ծովեզերքին վերայ և մրտենիներուն միջեւ խեղճութիւնը և միջատաքանակաւ օրինակներ փնտռելով, իր հաւաքածոն Սիւլլիվանի(^{*}) յիշ նախնիները պիտի կարենար չարթիլ: Այս ջրջադայութիւններուն մէջ սքովորարար իրեն կ'ընկերանար ծեր խափշիկ մը, ժիւրիգէր անուն, որ ազատագրուած էր ընտանիքին կրած ճախորդութիւններէն առաջ, բայց ո'չ սպառնալիքներով, ո'չ ալ խոստումներով կրցած էին հաւանեցնել որպէս զի հրաժարի սոյն բանէն՝ զոր իր իրաւունքը կը համարէր: Բայց տեղ իր Մասմ Ուիլիս ետեւէն երթալ և Հաւանականարար, Լըկրէնտի ծնողքը մատնելով որ անոր ուղեղը քիչ մը խանգարուած էր, ջանացին ամրապնդել ժիւրիգէրի յամառութիւնը, փախստականին վրայ տեսակ մը հսկող կամ պահպանող դնելու նպատակով:

Սիւլլիվան կղզիին կլիմային տակ շատ քիչ անգամ խիտ են ձմեռները, և տարիքին վերջը պատահար մըն է, եթէ պէտք կ'ըզայ կրակ վառելու: Սակայն 18... հոկտեմբերի մէջտեղը, օր մը նստածիկ ցուրտ եղաւ: Ծիւղ ամբիւն մարը մոտենէն առաջ անտառներուն մէջ ճամբաս կը հարթէի դէպ ի հիւղը բարեկամիս՝ որուն այցելած չէի շատ շարաթներէ ի վեր. — այս ատեն կը բնակէի Քաթլիսթըն, կղզիէն վեր մղոն հեռու, և երթալու, դառնալու հազորդակցութեան գիւրութիւնները այսօրուանինէն շատ տարբեր էին: Հիւղակը հասնելով, սովորութեանս համեմատ գալիկի դուռը, և պատասխան չառնելով, նիմուռեցի բանալին որուն ուր պահուած ըլլալը գիտէի. դուռը բացի և ներս մտայ: Ազուտը կրակ մը բոցեր կ'արձակէր վառարանին մէջ. Ասիկա անակնկալ մըն էր, և անշուշտ խիստ հաճելի անակնկալ մը: Համեցի վերագրեմնս (բարսքսիւ) թիկնաթոռ մը քաշեցի բոցավառ կիճկերուն առջեւ և համբերութիւնով սպասեցի հիւրերու գալուն:

(*) Հոլանտացի նշանաւոր բնապատմամբ (1637-1680)

Իրիկուան դէմ հասան և ինծի սրտագին ընդունելութիւն մը ըրին։ Ժիւրիդէր անդադար ինդալով ճաշի համար սկսաւ պատրաստել քանի մը ջրահաւեր։

Լըկրէնտ իր յափշտակութեան ճաղնապ ներէն մէկուն մէջն էր — ուրիշ բառ մը չեմ կրնար գտնել անոր վիճակը նկարագրելու համար ճշդիւ։ Անիկա գտած էր երկպատեան մը որ նոր սեռ մը կազմէր, և աւելին կայ, Ժիւրիդէրի օգնութիւնով հալածած և ձեռք ձգած էր բզեզ մը. որուն համար կը կարծէր թէ անձանօթ է, և որուն վրայ Դիմ կարծիքս ունենալ կ'ուզէր միւս օրը։

— Եւ ինչո՞ւ համար ոչ այս իրիկուն, հարցուցի ձեռքերս բոցերուն վրայ բռնելով և միտքէս անիծելով բզեզներուն ամբողջ ընտանիքը։

— Ա՛հ, եթէ միայն գիտնայի թէ հոս էիք, ըսաւ Լըկրէնտ. բայց երկար ատեն կայ որ ձեզ տեսած չեմ, և ի՞նչպէս կրնայի գուշակել թէ ինծի պիտի այցելէիք. մանաւանդ այս իրիկուն քան ուրիշ երեկոյ մը։ Փաշով ինծի, պատահեցայ անտաւի տեղապահ Ժ...ի. և անխորհրդաբար անոր փոխ մուր բզեզը. անկարելի պիտի ըլլայ ուրեմն ձեզի՝ զանիկա տեսնել առաւօտունէ առաջ։ Այս գիշեր հոս ֆնացէք, և պիտի խրկեմ Ժիւրիդէրը զանի բերելու համար առաւօտուն։ Անիկա արարչութեան ամէնէն հիանալի բանն է։

— Ի՞նչ, առաւօտը՞։

— Է՛հ, ո՛չ, բզեզը։ Անիկա ունի ոսկրի փայլուն գոյն մը, — հազիւ ամերիկեան ընկոյզի մը մեծութիւնը ունի — կռնակին մէկ ծայրը կուպրի պէս սեւ երկու բիծեր կան, և երրորդ մը միւսէն քիչ մը հեռու։ Անոր մսեղջիւրները...

— Անիկա ոչ ունենալ միս, եղ, ջուր, Մասսա Ուելլ, ես ձեզի գրաւ գնել ընդմիջեց Ժիւրիդէր(*). փսէզը ըլլալ թափծու ոսկի, ամբողջովին ոսկի, դուրսէն և ներսէն, բացի թեւերէն։ Եւ երբէք ունիմ տեսած կիսովին այնքան ծանր փսէզ մը, կեանքիս մէջ։

— Թող այդպէս ըլլայ, ընդունինք որ իրաւունք ունիք, Ժիւր, յարեց Լըկրէնտ քիչ

մը աւելի ուժգնակի, ինչպէս որ ինծի թուեցաւ, թէ անիկա բնական չէր. ասիկա պատճառ մըն էր որ թողուս հաւերդ այրին։ Միջառին գոյնը, — հոս ինծի դարձաւ — պիտի բաւէր արդարեւ արդարացնելու Ժիւրիդէրի գաղափարը կամ սխալանքը։ Սակայն որ, դուք անոր վերնաթեւերուն ունեցած փայլին չափ շողշողուն փայլ մը տեսած չէք երբէք. բայց միայն վաղը պիտի կարենաք դատել անոր վրայ, եթէ սպասէք կրնամ գաղափար մը տալ իր կազմուածքին վրայ։

Միշտ խօսելով նաւեցաւ փոքր սեղանի մը առջեւ, որուն վրայ կար գրիչ մը և մեկան, բայց ո՛չ թուղթ։ Գլորոցին մէջ փընտըեց, բայց չգտաւ։

— Կարեւոր չէ, ըսաւ վերջապէս, ասիկա պիտի ընէ գործը։

Եւ իր բաճկոնին գրպանէն հանեց բան մը որ ազնիւ թուղթի աղտոտ կտոր մը ըլլալ կը թուէր, եւ վրան գրիչով տեսակ մը ուրուագիր շինեց։

Մինչ անիկա այս աշխատութիւնով կ'ըզբաղէր, ես կրակին մօտ տեղս պահած էի, որովհետեւ տակաւին բոլորովին ընդարմացած էի։ Երբ իր գծագրութիւնը աւարտեցաւ, ինծի տուաւ առանց տեղէն ելլելու։ Երբ զանի կ'առնէի, լուսեցաւ պոռցտուք մը՝ որմէ ետք դուռը քերեցին և Ժիւրիդէր բացաւ, եւ խոշոր նոր-երկրի շուն մը որ Լըկրէնտի կը վերաբերեր, նետուեցաւ սենեակին մէջ, ցատկեց ուսերուս վրայ եւ սկսաւ գգուանքներու տարափ մը տեղացնել վրաս, որովհետեւ շատ բարի գտնուած էի հանդէպ իրեն, նախորդ այցելութիւններուն ատեն։ Երբ լմնցուց իր ցատկաւորքները, դիտեցի թուղթը, եւ ճշմարիտը խօսելով, շաղ չըփոթած էի, այնպէս որ չէի կրնար հասկընալ ինչ որ բարեկամս ուզած էր ներկայացընել։

— Այո՛, ըսի քանի մը վայրկեան թուղթը քննելէ ետք, ասիկա տարօրինակ բզեզ մըն է, կը հաւանիմ ասոր. բոլորովին նոր է ինծի համար։ Ատոր նման երբէք տեսած չեմ, ոչ ալ ատոր մօտաւորութիւն ունեցող մը. բայց եթէ անիկա չէ մեռեալի մը գըլուխը կամ գանկը, որո՞ւ աւելի կը նմանի քան բզեզի՝ զոր ինծի տուիք քննելու։

— Մեռեալի գըլուխ մը, կրկնեց Լըկ-

(1) Պէտք է գիտնալ որ Ժիւրիդէր խափշիկ մը ըլլալով լեզուն սխալ կը խօսի։

բէնտ : Ա՛հ, այո՛, արդարեւ թուղթին վրայ
ատոր նման բան մը կայ, առահովաբար :
Ո՞չ ապաքէն վերի երկու սեւ բիծերը աչ-
քերն են . ամէնէն երկայնը որ վարն է,
բերանի մը ձեւն ունի, եւ ապա բնդհանուր
ձեւը ձուածիւ է :

— Կարելի է, ըսի, բայց Լըիբէնտ կը
վախճամ որ արուեստագէտ մը չըլլաք, Պի-
տի սպառնում որ տեսնեմ նոյն իսկ պատենա-
թեւը (coléoptère) իր դիմագծութեան վը-
րայ գտնաւոր մը կտրմելու համար :

— Ինչպէս որ կ'ուզէք, ըսաւ քիչ մը
գրգռուած . չեմ գիտեր թէ ի՞նչպէս կ'ըլ-
լայ ասիկա . ես կը գծագրեմ բաւական սի-
րուն, կամ պարսէր գծէի շատ լաւ, որով-
հետեւ ունեցած եմ լաւ ուսուցիչներ եւ կը
կարծեմ թէ բոլորովին անկարող մը չեմ :

— Բայց այդ ատեն չը կատարանէք,
ըսի . ասիկա գաղկ մըն է խիստ չափաւոր . —
նոյն իսկ կրնամ ըսել թէ նմանչեւի գանկ
մըն է, համաձայն ոսկրագիտութեան այս
մասին բնդունած գաղափարներու, և ձեր
բզէզը պէտք է աշխարհի ամէնէն հետա-
քրքրականը ըլլայ, եթէ չը նմանի ատոր :
Վտոր վրայ կրնանք քիչ մը զուրմբանել :
Կենթադրեմք թէ ձեր միջատին պիտի տաք
Սֆարապիլէս Բաբուր հոմիցիս կամ ասոր մօտ
անուն մը : Բնական պատմութեան մէջ այս
սեռին վերաբերող շատ միջ անուանակոչու-
թիւններ կան . բայց ո՞րն են այն մեղմիւր-
ները որոնց վրայ կը խօսէիք :

— Մեղմիւրները, ըսաւ Լըիբէնտ, որ
կ'սկսէր տաքնալ առանց գիտնալու թէ ին-
չո՞ւ : Պէտք է տեսնէք մեղմիւրները, ես
զանոնք այնքան որոշ չինած եմ որքան են
բնականին մէջ, եւ կը կարծիմ թէ ասիկա
բաւական է :

— Անշուշտ, անշուշտ, ըսի, կրնայ ըլ-
լալ որ զանոնք չինած ըլլաք, բայց ես չեմ
տեսներ զանոնք :

(Շարունակելի)

Թարգմ. ԱՇՈՏ Յ. ՊԱՉՊՁԵՆԱՆ

Ո՞վ Ձի ԿԱՐԴԱՐ

ՔԱՍԻՄԻ ԹԱՐԳՄԱՆԱԾ

Աշխարհաբար ՆԱՐԵԿԸ

Կը հրատարակուի Մանգուսի Էմֆեար օ-
րաթերթին մէջ . Սեպտ 11էն սկսեալ (թիւ
431) . Ուրբաթ օր, իբր թերթօն :

“ՀԱՆՐԱԳԻՏԱԿ” ՅԱԶՈՐԴ ԾԵԶԱՆԸ

ՀԱՆՐԱԳԻՏԱԿԻ գտած համակիր ընդու-
նելութենէն քաջալերուած թերթին ձեւին
ու պարունակութեան մէջ քանի մը փոփո-
խութիւններ մտցնել մտադրեցինք աւելի
եւս դիւրամատչելի եւ օգտակար ըլլալու
համար ամէն ինքն-թերցողներու :

Նախ՝ Հանրագիտակ պիտի ըլլայ ՇԱՅԱ-
ԹԱԿԻՆ, կանոնադրաբար ամէն շաբթու տա-
լով 18-20 մեծադիր էջեր, պատկերազարդ,
իսկ րաժնեգիրն պիտի ԶեղՁՈՒԻ՝ տարեկա-
նը 35 դշ. գաւառներու, 36 դրշ. Պոլսոյ
համար . 36 փարա հատը ձեռքէ :

Թղթատարի եւ ուրիշ քանի մը դիւրու-
թիւններու պատճառաւ թերթին ծաւալը
արդի մեծութենէն քիչ մը պիտի պզտիկնայ,
իսկ ասոր փոխարէն իւրաքայչիւր թիւ 18
կամ 20 էջ . որուն երկու էջը պիտի պա-
րունակէ խաղեր, զբօսալի խնդիրներ, գի-
տական զբօսանքներ, պատկերազարդ զը-
ւարճալիքներ, նկար-հանելուկներ, գեղ-
արուեստի սուարկաններու շինութեան բա-
ցատուութիւններ և ուրիշ զուարճալիքներ :

Գալով բուն թերթին՝ նիւթերուն ընտ-
րութիւնը պիտի ըլլայ խիստ շատ խնամքով .
արդէն հայ անուանի ուսուցիչներէ և կա-
րէկար վարժարաններու Տնօրէններէ շատեր
խոստացած են մեզի իրենց մասնագիտու-
թեան և դպրոցավարութեան վրայ խօսիլ :

Մեր ծրագիրը պիտի ըլլայ .

Ծաւրդութեան պատմութիւններ, դըպ-
րոցի տրամախօսութիւններ, առակներ ու
ոտանաւորներ, մանկավարժական սուղնոր-
դող յօդուածներ, Անտէրսընի և Սէկիւր
կոմսուհիի աւանդավէպերէն թարգմանու-
թիւններ, պարգեւաւոր մրցումներ, և այլն :

Մէկ խօսքով Հանրագիտակ իր անունին
արժանի թերթը պիտի ըլլայ դպրոցական-
ներու եւ ուսուցիչներու . ինքզինքը կեր-
պով մը անհրաժեշտ ընելով ամէն դպրոցի
մէջ :

ԽՄԲԻՐԱՊԵՏ — ԱՐՏՕԵԱՏԷՐ

ՊՐԽԵՆ ԱՌԻՍԷՆԵՍ

ՏՊԱԳՐԻՉ — ՀՐԱՏԱՐԱԿԻՉ

ՆՇԱՆ Ե. ՊԵՐՊԵՐՍԱՆ

Պապը Ալի ճատոէսի, Թիւ 38, Իգտամ լրագրի դէմ :

[illegible]

ՆՇԱՆ Կ. ՊԵՐՊԵՐԵԱՆ

Տ Պ Ա Ր Ա Ն Ը

Փոխադրուած ըլլալով՝

Կ. ՊԵՐՊԵՐ, ՊԵՐՊԵՐ ԱՆԻ ՀԱՅՏԵՍԻ, ԹԻՒ ՅՏ. ԻՆՏԱՐ ԼԵԱԴԻ ԴԻՄԱՑ

Ստացած է տպագրական նոր

կազմակերպութիւններ

եւ կը սպագրէ ամեն
սեսակ գիրքեր, մահ-

ազդեր, հանդեսներ, օրգաբերականներ, հարսանեաց հրաւիրագրեր, նամակագլուխներ, այ-
ցաբարդեր, եւ տպագրութեան վերաբերեալ ամեն սեսակ պիտոյքներ: — Տպարանին սեփական
20000-է աւելի պատկերները յանախորդաց տրամադրութեան տակ են ձեռք:

Անմեղելի մաքրութիւն եւ ներառականութեամբ

գաւառներէն ալ կ'ընդունի ամեն սեսակ յանձնարարութիւններ:



ՀԱՆՐԱԳԻՏԱԿԻ նոր բացած Շարադրութեան մրցումներն
մասնակցողները պարտին սոյն կտրոնը կտրելով՝ իրենց գը-
րութեանց հետ զրկել Խմբագրութեան, հակառակ պարա-
գային՝ նկատողութեան չեն առնուիր:

Հանրագիտակ ձեռքի կը ծախուի Պոլսոյ մէջ հաստ
40, իսկ գաւառաց մէջ 50 փարսայ:

Կ. Պոլիս, Պապ ալի ճատէսի թիւ 38 ۞ باب على جاده سنه ۱۲۷۰

Թ Է Յ

Թ Է Յ

Թ Է Յ



Ը Ն Տ Ի Ր

Հ Ո Տ Ա Ի Է Տ

Խ Ն Ա Յ Ո Ղ Ա Կ Ա Ն

Կ. ԵԱՎՐՈՒԵԱՆ և Յ. ԻՍԱԳՈՒԼԵԱՆ վաճառատունը պատրաստ՝ և թէ օր ըստ օրէ
սնող թարմ և ազնուագոյն տեսակ թէյերով կ'ընայ այսօր անորոշելի ածանութեամբ
գ. հացում տալ նոյն իսկ էն խտապահանջ թէյի սիրահարներու: ԵԱՎՐՈՒԵԱՆ և ԻՍԱ-
ԳՈՒԼԵԱՆ հաստատութիւնը կը թղթակցի գաւառներու հետ եւ յանձնարարութիւններ կ'ը
կատարուին ամենայն ճշգրտութեամբ:

Աժան, ընտիր ու հոտաւէտ թէյ գործածողներու ջերմապէս կը յանձնարարենք ան-
դամ մը այցելել Կ. ԵԱՎՐՈՒԵԱՆ և Յ. ԻՍԱԳՈՒԼԵԱՆ վաճառատունը, ձէլալ-Պէյ խանի
կից թիւ 10, ուր պիտի գտնեն մեծաքանակ և փոքրաքանակ թէյի ճոխ մթերք մը:

Ա. Ժ. Ա. Ն

Ա. Ժ. Ա. Ն

Ա. Ժ. Ա. Ն